

«Իսկ ես եկեալ Լով եւ նստեալ երկու ամիս: Տեսեալ զիս բարեկամք իմ եւ սիրելիք յոյժ ուրախացան: Եւ սկսան յորդորել զիս մնալ յաշխարհս իմ աստ եւ ամուսնանալ. բայց ես ոչ յօժարէի: ... Եւ իբրեւ բազում ողորմութիւնսք ստիպէին, այլ եւ կշտամբէին զիս լսել նոցա. Բաւական է, ասեն, պանդխտութիւնդ այսչափ եւ օտարութիւնքդ զոր կրեցեր. հաւանեաց մեզ եւ մի ի սպաս ձգեր զմեզ ի սուգ եւ ի տրամութիւն: Քանզի ունէի երկու քոյր եւ քրորդիք եւ այլ յօլով աղգականք. այլ եւ տեսեալ զհայրենի տունս եւ զընակութիւնս, զստացուածս եւ զայլս, խանթաղատեցայ եւ ի դուժ անկեալ կամաւորեցայ մնալ առ նոսա: Եւ մինչդեռ Ղուկաս պարոնտէրն անդ էր, իսկոյն նշանեցին զիս ընդ աղջկան միոյ. որ եւ յետ սակաւ աւուրց¹⁴ զնաց Ղուկաս եպիսկոպոսն յերուսաղէմ» (էջ 348—349):

Միմէտն կը նշանուի 1619 Սեպտ. 12ին պարոն Յովհաննէսի որդւոյ Քէվորովից Եացքոյի դստեր Նասդուխնայի հետ: Նշանադրութեան երկակողմանի կնքուած պայմանները — «գրօրէնքը» — ունինք Վիեննայի Մխիթ. Մատենադարանի Թ. 441, Թղ. 151 ա—բ, Լվովի Հայոց Գրօրէնքի մէջ, դժբախտաբար թաթարերէն լեզուով. յառաջ կը բերեմ սկզբնաւորութիւնը միայն.

¹⁴ Այսինքն նշանադրութենէն քիչ ետքը: